




ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ԿԵՂԵՑՈՒ ԶԱՓԱԾՈՒ ՏՈՄԱՐԸ

§ 1. Սամվել քահանա Անեցու ժամանակագրության շարունակողը, իր ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների շարքում, առանձին թվականի տակ, որպես կարևոր գրական երևույթ, արձանագրել է Ղուկաս Կեղեցու կողմից Հռոմեական տոմարի չափածո շարադրելու փաստը. «ՌԶ. Ղուկաս վարդապետն Կեղեցի՝ զտոմարն Հռոմայեցոց ոտանաւորեաց»¹:

Կեղեցու այս արձանագրության վրա հետագայում կանգ են առել նաև Առաքել Դավրիժեցին² և Գրիգոր Դարանաղեցին: Վերջինս, ժամանակի աչքի ընկնող մարդկանց շարքում Կեղեցու անձնավորությունը ներկայացնելու նպատակով, մատնացույց է անում նրա չափածո տոմարը. «Նախ՝ Կեղեցի Ղուկասն, շնորհալի բանաստեղծն և տաղասաց, զտոմարն Հռոմոց ոտանաւոր շարադրողն»³:

Ղուկաս Կեղեցու չափածո տոմարական աշխատությանը հետ նոր ժամանակներում ծանոթ են եղել որոշ հայադեպոսներ: Այսպես, Հակոբ Կարնեցին հայտնում է, որ՝ «Կեղեցի Ղուկաս վարդապետն զՀռոմայեցոց տոմարն և այլ բազում ոտանաւորս է շարադրեալ»⁴:

1. Սամուէլի քահանայի Անեցու շաւրմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893 թ., էջ 176:

2. Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցու, Վաղարշապատ, 1896 թ., էջ 630:

3. Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցու, Երուսաղէմ, 1915 թ., էջ 350:

4. Հակոբ Կարնեցի, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903 թ., էջ 12:

Հ. Տաշյանն իր կազմած ձեռագրաց ցուցակում նշել է, որ Վիեննայի № 88 ձեռագիր ժողովածոում պահվել է Կեղեցու այդ տոմարը, ըստ որում, Տաշյանը բերել է Կեղեցու տոմարի սկզբի առաջին քառյակը⁵:

Սովետական մեր դիտնականներից Կեղեցու տոմարը հիշել է մեծանուն ակադեմիկոս Հ. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարան»ում⁶:

Զարմանալ միայն կարելի է, որ հայ մատենագրության մեջ մեծագույն գովեստի արժանացած այս աշխատությունը մինչև այժմ չի հրատարակվել: Պիտի նկատի ունենալ, որ Ղուկաս Կեղեցու այս երկը, թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության, արժանի է հատուկ ուշադրության, որովհետև նախ այն տոմարական բովանդակություն ունի և ապա՝ շարադրված է չափածո:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի տոմարական տեքստերի բիրիդգրաֆիան կազմելիս, ձեռագրերում մենք հանդիպեցինք Ղուկաս Կեղեցու վերև հիշված տոմարի մի շարք ընթերցանականություններին, որոնց վրա և մենք ցանկանում ենք կանգ առնել: Բայց նախքան նշված աշխատության մասին խոսելը, հակիրճ, մի քանի խոսքով, ներկայացնենք մեր ընթերցողներին Ղուկաս Կեղեցու անձնավորությունը:

5. Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց Միխայիլանց ի Վիեննա, էջ 351:

6. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ. հատոր, էջ 151:

§ 2. Ղուկասը՝ բնիկ Կեղեցի է (Խորձինացի)։ Մնված պիտի լինի 16-րդ դարի 20-ական թվականներին։ Սովորել է իր ժամանակին մեծ համբավ ունեցող Հովհաննես Շիրակ (Չերաք) անունով վարդապետի մոտ։ Երիտասարդ հասակից կուսակրոնություն է ընդունել և պարապել մատենագրական և մանկավարժական աշխատանքներով։ Շուտով նա մեծ հեղինակություն է ձեռք բերել և ճանաչվել որպես իր ժամանակի «մեծ վարդապետ»ը, «գլուխ ամենայն վարդապետաց»⁷։ Վարձագրական մի աշխատության մեջ նա նույնիսկ հիշված է «ի շարս փրկստփայլից»⁸։

Չնայած ժամանակակիցներն անշափ դավաճանում են խոստով Կեղեցու մատենագրական աշխատանքների մասին և համարում են «բազմաբեղուն», սակայն Կեղեցուց քիչ բան է հասել մեզ և հասածներն էլ աչքի ընկնող գործեր չեն։ Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարանի ձեռագրերից հայտնի է միայն նրա քարոզների ժողովածուն, որը դեռ չի հրատարակված։ Հայտնի է նույնպես երկրորդական մի «տառնավոր», որը հրատարակված է «Հանդես ամսօրեայ»ում⁹։ Գուցե հետագայում այլ մատենագրաներում գտնվեն Կեղեցու նոր գործերը ևս։ Սակայն, մենք հակված ենք մտածելու, որ Կեղեցու երկերը հայ մատենագրության պատմության մեջ, գրական-գիտական տեսակետից, առանձին որակ կազմել չեն կարող։ Անվիճելի է, որ յուրաքանչյուր գրական-գիտական ստեղծագործություն արտահայտությունն է իր դարաշրջանի, իսկ Կեղեցու ապրած ժամանակաշրջանը՝ 16-րդ դարը, հայ ժողովրդի ստեղծագործական մտքի պատմության մեջ ամենամոռաց և մղձավանջային դարաշրջաններից մեկն է։ Այդ շրջանում հանդես եկող մատենագրերը կայծքարից ցայտած կայծերի են նման՝ քարուքանդ երկրի վրա տարածված խավարի համատարած ծովի մեջ։ Իշխող հայացքները շատ նեղ են և միատիկ։ Թեման, մեծ մասամբ, կրոնական է։ Չեն երևում ո՛չ միայն Խորենացիների, Շիրակացիների, Հովհաննես Իմաստասերների շարքի մատենագիրներ, այլ նույնիսկ հին մատենագրական երկերի հասարակ մեկնողներ։ «Վշտապատ ժամանակ»ը նախորդ շրջանից շատ բան էր

փոխել։ Կեղեցին, որպես իր ժամանակի իշխող դադափարախոսության հարազատ արտահայտիչը, մնում է այդ շրջանակի մեջ և նրանից վեր չի բարձրանում։

Ղուկաս Կեղեցու մոտ աշակերտել են եկեղեցական-հասարակական բարձր դիրքի արժանացած մի շարք անձնավորություններ, որոնց թվումն է էջմիածնի Սրապիոն կաթողիկոսը (1603—1605 թ. թ.)¹⁰։ Առաքել Դավրիժեցին իր պատմության մեջ բերել է 16—17-րդ դարերում աչքի ընկած հայ մատենագրերի աշակերտելու շարքը՝ որը սկսվում է Մխիթար Գոշից և վերջանում իրենով։ Ըստ այդ ցանկի, Գոշին աշակերտել է Հովհաննես Վանականը, վերջինիս՝ Վարդանը, ապա հաջորդաբար իրենց նախորդներին աշակերտել են Ներսեսը, Սաայի Նեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Հովհաննես Շիրակը և ապա՝ Ղուկաս Կեղեցին։ Դավրիժեցին իր այդ դավադանացանկում Կեղեցու աշակերտ է համարում Սրապիոն կաթողիկոսին (Ուսուցիցուն)՝ 17-րդ դարի էջմիածնի աչքի ընկնող մի շարք կաթողիկոսների ուսուցիչին, որի անվան հետ է կապված և էջմիածնի նոր շրջանի մատենագրական դպրոցը. «Նորին աշակերտ (այսինքն՝ Ղուկաս Կեղեցու աշակերտ — Ա. Ա.) Սրապիոն Ուսուցիցի, — գրում է նա, — որ եղև կաթողիկոս Սրբոյ էջմիածնի, նորին աշակերտ Գրիգոր Կեսարացի, նորին աշակերտ Մովսէս Սիւնեցի, որ եղև կաթողիկոս Սրբոյ էջմիածնի, և նորոգող նմին, նորին աշակերտ Փիլիպոս կաթողիկոս Սրբոյ էջմիածնի, նորին աշակերտ անարժան և մեղապարտ գրիչս Առաքել (Դավրիժեցի) և իմ աշակերտ Մակուցի վարդան»¹¹։

Ղուկաս Կեղեցին, ինչպես երևում է, ապրել է մինչև իր ծերության հասակը. նա, ըստ Դարանաղեցու վկայության, մահացել է 1601 թվականին¹²։ Բանասեր Ա. Արադյանը, հիմնվելով մի հիշատակության վրա, մահվան թվականն է նշանակում 1602¹³, որը հավանական է, նկատի ունենալով տապանաքարի արձանագրությունը։ Կեղեցին մահանալիս պիտի եղած լիներ մոտավորապես 80—85 տարեկան հասակում։ Նա թաղված է Երզնկայի Սուրբ Սարգիս եկեղեցում։

10. Մ. Օրմանյան, Աղագապատում, Բ. հատոր, էջ 2291—2296։

11. Առաքել Դավրիժեցի, էջ 440—441։

12. Գրիգոր Դարանաղեցի, էջ 351։

13. Ա. Արադյան, Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937 թ., Բ. հատոր, էջ 1860։

7. Առաքել Դավրիժեցի, էջ 10։

8. Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դ. դ., հրատարակություն Վ. Հակոբյանի, Երևան, 1951 թ., էջ 246։

9. «Հանդես ամսօրեայ», 1937 թ., էջ 127։

§ 3. Ղուկաս Կեղեցու մեզ հետաքրքրող չափածո տոմարական աշխատության մի շարք ընդօրինակություններն են պահվել Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում, որոնցից խորագրեր տնեն ոչ բոլորը: Ընդօրինակությունները, բացառությամբ մեկի, ամբողջական վիճակում են: Անհրաժեշտ ենք համարում տալ մեզ հայտնի ընդօրինակությունների համառոտ բերվող պահպանում:

Ա. № 7098, թ. 170ա—174բ, անխորագիր, սկսում է անմիջապես տեքստից՝ «Պատմե՛ն Հոռոմոց մեծ տումարի, պարգեալ հարանցն մեր նախնի...», 16-րդ դարի վերջերի կամ 17-րդ դարի սկզբների ընդօրինակություն է, գրիչը և գրչության վայրն անհայտ:

Բ. № 2018, թ. 107բ—111ա, «Պատմե՛ն(ն) Հոռոմայեցոց տումարին, ռուսաճառք ձեռն ի Ղուկաս վարդապետէ ասացեալ», 1620 թվականի (?) ընդօրինակություն, գրիչը՝ Սահակ, գրչության վայրը՝ Կոստանդնուպոլիս:

Գ. № 739, թ. 250ա—254ա, անխորագիր, սկսում է տեքստից՝ «Պատմե՛ն Հոռոմացոց մեծ տումարի, պարգեալ հարանցն նախնի...», 1631 թվականի ընդօրինակություն, գրիչը՝ Սիմեոն կրոնավոր, գրչության վայրը՝ հայտնի չէ:

Դ. № 8575, թ. 312ա—318բ, անխորագիր, սկսում է տեքստից՝ «Պատմե՛ն Հոռոմոց մեծ տումարի, պարգեալ հարանցն մեր նախնի...», 1632 թվականի ընդօրինակություն, գրիչը՝ Սարգիս արեղա, գրչության վայրը՝ Ամիրթ քաղաք:

Ե. № 2330, թ. 4բ—6ա, «Ուտանառ տումար ի Ղուկաս վարդապետէ ասացեալ», 1633—1642 թվականների ընդօրինակություն, գրիչը՝ Ստեփան Մշկոցին, գրչության վայրը՝ Կաֆա:

Զ. № 3071, թ. 456բ—458բ, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմոց մեծ տումարի, պարգեալ ի հարանցն մեր նախնի...», 1657 թվականի ընդօրինակություն, գրիչը՝ Գրիգոր, գրչության վայրը՝ Հովհաննու վանք և Ուշի:

Է. № 3504, թ. 204ա—206ա, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմաց մեծ տումարին, պարգեալ հարանցն մեր նախնի...», 1676—1692 թվականների ընդօրինակություն, գրիչը՝ Վարդան, գրչության վայրը՝ Կաֆա:

Ը. № 543, թ. 190բ—192բ, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմաց մեծ տումարին, պարգեալ հարանցն մեր նախնի...», 17-րդ դարի ընդօրինակություն: Գրիչը և վայրը՝ անհայտ:

Ս. № 607, թ. 104ա—105ա, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմաց մեծ տումարին, պարգեալ հարանցն մեր նախնի...», 17-րդ դարի ընդօրինակություն: Գրիչը և գրչության վայրն անհայտ:

Ժ. № 3169, թ. 429ա—433ա, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմաց մեծ տումարին, պարգեալ հարանցն մեր նախնի...», 17-րդ դարի ընդօրինակություն, գրիչը և գրչության վայրն անհայտ:

ԺԱ. № 3190, թ. 12բ—20ա, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հայոց մեծ տումարին, պարգեալ հարանցն մեր նախնի...», 17-րդ դարի ընդօրինակություն, գրիչը և գրչության վայրն անհայտ:

ԺԲ. № 6045, թ. 191բ—197բ, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն Հոռոմաց մեծ տումարի, պարգեալ հարանցն մեր նախնի...», վերջը թերի, 17-րդ դարի ընդօրինակություն, գրիչը և գրչության վայրն անհայտ:

ԺԳ. № 3860, թ. 174բ—178ա, անխորագիր, տեքստն սկսում է՝ «Պատմե՛ն տումարի», սկզբում եղած սովորական աղյուսակով:

Ամիսը և տոմար Հոռոմայեցոց	Քառիք	Կրկնակ	Կրնակ	Յարկայ
------------------------------	-------	--------	-------	--------

19-րդ դարի ընդօրինակություն, գրիչը և գրչության վայրն անհայտ:

ԺԴ. № 8171, թ. 41ա—46ա, «Պատմե՛ն տումարի Ղուկաս Կեղեցու», 18-րդ դարի ընդօրինակություն, գրիչը և գրչության վայրն անհայտ:

§ 4. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի այս 14 ընդօրինակությունները, ինչպես պարզվում է մեր ուսումնասիրությունից, քիչ են տարբերվում իրարից. եղած տարբերություններն ավելի գրչական են և ուղղագրական ու էական նշանակություն չունեն: Ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ հին ձեռագրերը, համեմատաբար, ավելի ընտիր ընդօրինակություն են, քան նորերը:

Ձեռագրերի մեծ մասը, ինչպես ասացինք վերևում, վերնագիր չունեն: Եղած վերնագրերից ամենից հարադատ ու նախնական է մեզ երևում № 2018 ձեռագրի վերնագիրը՝ «Պատմե՛ն(ն) Հոռոմայեցոց տումարին, ռուսաճառք ձեռն ի Ղուկաս վարդապետէ ասացեալ», թեպետև՝ նա ևս կարող է գրված լինել ու շրջանում ընդօրինակող գրիչների կողմից:

Տոմարական չափածո այս աշխատության Ղուկաս Կեղեցու հեղինակությանը պատկանելն անվիճելի է. այդ երևում է իրեն՝ Ղուկաս Կեղեցու հետևյալ քառյակից.

«Հազար ու վեց թվականի,
Սակաւ տոմարս ի յոտք հանի,
Ես որ յիշման շեմ արժանի,
Անուամբ միայն վարդապետի»:

Կեղեցու տոմարի պատվիրատուն է հանդիսացել Դավիթ Զեյթունցին, տոմարի ստանասիրութեամբ անշափ տարված մի անձնավորություն, որը նույնպես գրած ունի չափածո սեփական մի տոմար, որը հայտնի է դառել մեզ և նպատակ ունենք առաջիկայում հրատարակության հանձնել: Որ իրոք Դավիթ Զեյթունցին է տոմարական այս աշխատության պատվիրատուն, այդ երևում է Կեղեցու հետևյալ քառյակից.

«Ժսկ տէր Դավիթն Զեյթունցի,
Յինէն խնդրեաց եւ ես գրեցի,
Ի խրախովին մանկագունի,
Այլ յիմաստնոց պարսաւելի»:

Ղուկաս Կեղեցին իր չափածո տոմարը գրել է հայոց 1006, այսինքն՝ մեր թվագրության 1557-ին, իր երիտասարդական շրջանում. եթե նրա տարիքը մահացման ժամանակ ընդունենք 80—85, ապա ներկա տոմարը գրած պիտի լինի 35—40 տարեկան հասակում, մի տարիք, որն անհրաժեշտ էր որ նա ունենար, որպեսզի նրան վստահվեր այդպիսի մի կարևոր գործի պատվերը:

§ 5. Կեղեցու՝ տոմարը՝ «Հռոմայեցւոց պատճէնն» է հանդիսանում, այդ է, որ մեր անվանի մատենագիրը ռոտք է հանել: Սակայն այդ պատահական «Հռոմայեցւոց պատճէններից չէ, որ Կեղեցին վերցրել է հռոմայեցիներից ու որպես տոմար սիրող անձնավորություն՝ թարգմանել և չափի վերածել: Հայաստանում շատ վաղուց, դեռևս Շիրակացու ժամանակից, երբ մեզ մոտ գործածականը շարժական տոմարն էր, հայերեն են թարգմանել մի շարք «պատճէններ»՝ ասորերեն, եբրայեցիերեն, եթովպերեն և այլն, որոնց թվում նաև՝ «Հռոմաց պատճէնը»: Այդ պատճէններն ունեին տոմարական գործնական նշանակություն, որովհետև հնարավորություն էին տալիս նրանք համեմատության մեջ դնել շարժական տոմարի հաշվումների հետ և խոսափել տոմարական սխալներից: Այդ պատճառով էլ այդ պատճէնները հաճախակի ենթարկվել են մեկնություն: Այց պատճէնների հիման վրա 1084 թվականին Հովհաննես Սարկավադը

ևս կազմեց իր ինքնուրույն անշարժ տոմարը, որը և հետագայում ընդունվեց եկեղեցական պաշտոնական շրջանների կողմից և գործադրության մեջ դրվեց: Ղուկաս Կեղեցին վերցրել է ահա հայ հեղինակների այդ «պատճէններից մեկը, իհարկե, նրա հին հարկական մեկնությունը՝ «պարզեալ հաշանցըն մեր նախնի»,— ինչպես ինքն է ասում:

Կեղեցու այս աշխատությունը զուտ տոմարական աշխատություն է: Սկսում է տարվա չորս եղանակներից, և նշվում, թե ուր ամիսները ո՞ր եղանակի մեջ են մտնում: Ապա անցնում է առանձին ամիսների քննությանը՝ ցույց տալով նրանց յուրաքանչյուրի օրերը և կրկնակները: Նա այստեղ գործնական խորհուրդ է տալիս կրկնակը հաշվելու եղանակի մասին: Այնուհետև նա կանգ է առնում յոթներյակի, վերադրի, իննևտասներյակի, Զատիկի լրման և տոմարական այլ խնդիրների վրա և աշխատում ընթերցողին ծանոթացնել նրանց հաշվելու ձևի հետ: Այնուհետև նա երկարորեն կանգ է առնում անշարժ տոների վրա՝ ցույց տալով հայկական տոների օրերը ըստ հռոմեական ամիսների հաշվի: Վերջում նա կանգ է առնում տարվա կենդանակերպի վրա:

§ 6. Ի՞նչ արժեք ունի Կեղեցու տոմարական ներկա աշխատությունը գիտության համար, ինչո՞ւ անհրաժեշտ համարեցինք մեր ձեռքի տակ եղած հարյուրավոր անտիպ տեքստերից հատկապես այն հրատարակության հանձնել:

Կեղեցու ներկա աշխատությունը, ամենից առաջ, արժեքավոր է գիտության պատմության, առանձնապես տոմարի պատմության համար: Սամվել Անեցու կապակցությամբ մենք առիթ ենք ունեցել նշելու, որ հայ մատենագրությունը հարուստ է տոմարական գրականությամբ. մենք ունենք ուշադրության արժանի տոմարական անտիպ բազմաթիվ տեքստեր: Կեղեցու ահա այս տոմարը հայ տոմարագիտական գրականության ընտիր նմուշներից է: Ծիշտ է, այդ աշխատությունը տոմարական աչքի ընկնող ինչ որ բացառիկ նորություն չի բերում մեզ. նրա մեջ շարադրված են միջին դարերում քաղաքացիություն ունեցող տոմարական սովորական հարցեր, բայց այն արժեքավոր է այն տեսակետից, որ մենք այդ աշխատության մեջ ի վիճակի ենք գտնվում դատել իր ժամանակի տոմարական գիտության զարգացման աստիճանը հայ իրականության մեջ:

Մյուս կողմից, Կեղեցու տոմարն արժեքավոր նմուշ է հայ միջնադարյան շափածո զրականության պատմության համար: Տեքստերի շափածո շարադրման ձևը միջին դարերում հայ մատենագրության ասպարեզում սովորական է եղել. շափածո շարադրել են ո՛չ միայն հայ ժողովրդի պատմությունը, դրվիչների հիշատակարանները, փիլիսոփայությունը, այլև գրական գիտությունների ասպարեզից չոր ու բարդ համարվող այնպիսի գիտություններ, ինչպիսին տիեզերագիտությունն է, թվարանությունը և այլն: Այժմ ահա մենք ունենում ենք շափածո մի նմուշ տոմարական գրականությունից:

Եվ, վերջապես, մենք հրապարակի վրա այժմ ունենում ենք մատենագրության մի կարևոր նմուշ նաև մեր մոռյալ շրջանից՝ 16-րդ դարից, ըստ որում, հեղինակավոր այնպիսի մի մատենագրից, որն իր ժամանակին հայ իշխող գաղափարախոսության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկն է եղել և հսկայական ազդեցություն ունեցել իր հետևորդների վրա:

Մենք հրատարակում ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2018 ձեռագրի տեքստը, որի վրա մենք կանգ ենք առնել առջևում՝ Ղուկաս Կեղեցու տոմարական աշխատության ընդօրինակությունների բիլիոգրաֆիայի մասին խոսելիս:

**ՊԱՏՃԷ(Ն) ՀՌՈՄԱՅԵՑՈՅ ՏՈՒՄԱՐԻՆ, ՈՏԱՆԱՒՈՐ ՁԵՒՈՎ
Ի ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՅԵԱՆ**

Պատճէն Հոռմայ մեծ տոմարի,
Պարզեալ հարանցըն մեր նախնի,
Բայց արդ Ղուկասս Կեղեցի,
Ոտանաւոր շարադրեցի:

Անուանք ամսոց հոռմայական,
Յունվար, փետրվար եւ մարտ գարնան,
Ապրիլ, մայիս, յունիս ամսան,
Սա կէս տարոյն է անխափան:

Յուլիս եւ օգոստոս՝ որ կան,
Եւ սեպտեմբեր ամիս աշնան,
Հոկտեմբեր, նոյեմբեր անցան,
Եւ դեկտեմբեր վերջին ձմարան:

Քանիք աւուրց ամսաթիւին,
Եռսուն եւ մէկ յունվարի(ն),
Քսան եւ ութ փետրվարին,
Մէկ յաւելու ի նահանջին:

Եւ եռսուն ու մէկ մարտին,
Ապրիլ եռսուն, մէկ մայիսին,
Յունիս եռսուն, մէկ յուլիսին,
Եռսուն ու մէկ օգոստոսին:

Եւ եռսուն սեպտեմբերին,
Եռսուն ու մէկ հոկտեմբերին,
Դարձ եռսուն նոյեմբերին,
Եռսուն եւ մէկ դեկտեմբերին:

Յունվար ամսոյ կրկնակ չրկա,
Այլ երեք թիւ՝ փետրվարայ,
Մարտի երեք, վեց ապրիլայ,
Մայիսի մէկ, չորս յունիսայ:

Յուլիսի վեց աստից ի վեր,
Օգոստոսի երկուս դու բեր,
Հինգ սեպտեմբեր, չկայ հոկտեմբեր,
Եւ նոյեմբեր, հինգ դեկտեմբեր:

108ր Կրկնակ ամսոց այսպէս արա,
Կալ զյունվարի աւուրսն որ կայ,
Եօթըն եօթըն՝ զամէն գընա,
Մընայ կըրկնակ փետրվարայ:

Կալ զփետրվար ընդ կըրկնակին,
Նոյնպէս արա զամենեսին,
Բայց կիսակին քսան եւ ին,
Կէս աւելի երթ ընդ նըմին:

Կալ յունվարոյ մինչեւ ուր ես,
Յամէն ամսոյ թիւ մի առցես,
Ջատ յայն ամսոյն որ ի ներս ես,
Ի կիսակի տեղն բռնես:

Թրվական Հոռմայ այսպէս արա,
Կալ եռ հարիւր չորս յարակայ,
Ջմեծ թվականն ազգիս Հայկայ,
Միով պակաս բեր ի վերայ:

Շրջանն որքան որ յաւելու,
Երթ հինգ հարիւր երկու,
Մնացեալըն թուին է նոր տարոյ,
Այսով արա զամէնըն դու:

Եւթներեակ արեգականն
Այսպէս արա. կալ զթվականն,
Քըսան եւ ութ երթ միարան,
Որքան եղնէ թիւն ի լըման:

Որ ի խոնարհ մընայ քան զայն,
Յամէն չորս թիւ մէկ յաւելնան,
Եւթներ գընա զամենեսեան,
Եւ եւթներեակ տարոյն մընան:

Կալ զեւթներեակ զանցեալ ամին,
Թիւ մի յաւել վերայ նորին,
Եւթներեակ ապագային,
Ինի առանց թրվականին:

109ա Իսկ ի շորորորդ ամ նահանջին,
Եւթներեակ լինի կըրկին,
Թիւ մի ի մտաւրն յունվարին,
Երկրորդ մարտի ամսամըտին:

Դեկտեմբեր օրըն վերջին,
Ինչ որ լինի գիր պատկերին,
Եւթներեակն է առաջին ամին,
Եւ վերադիր քանիք լուանին:

Ամսամըտին կալցես թիւ մին,
Ջեօթնեակ տարոյն կրկնակ ամսին,
Եօթներ երթաս որ վրձարին,
Թէ մէկ մընայ է կիրակին:

Եւ թէ երկու՝ երկուշաբթին,
Նոյնպէս երեքն որ ի կարգին,
Օրագիրտին կալ զօր ամսին
Եւ ալլըն որպէս ամբսամըտին:

Վերադիրն այսպէս արա,
Լուանին պակասն է, քաջ քամա,
Թըւէն տասն եւ իններ գընայ,
Որ ի խոնարհ քան զայս մընայ:

Ըզմէկըն տասնութէկ արա,
Ինն հանապաղ առ ի բացեայ,
Երթ երեսուն քան յաւելնայ,
Նոր վերադիր է որ մընայ:

Կալ զվերադիր անցեալ ամին,
Մետասան բեր վերայ նորին,
Իսկ յինն եւ տասներեակ տարին,
Թիւ մի յաւել վերադըրին:

Յինն եւ տասներեկ տարին
Այսպէս արա՝ կալ զթրփին,
Գնա զամէնըն իննետասան,
Թէ լըման դայ, այն է տարին:

109բ Մընունդ լուանի առնես տարոյն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Ջվերադիրն երթ զկիսակ ամսոյն,
Որ մընայ՝ ծնունդ է յայնքան ամսոյն:

Աւուրց լուանի կալ զօր ամսին,
Ջկիսակ նորին զթիւ վերադիրն,
Եւ եռուն որչափ լինին,
Ձգեա, մընա աւուրք լուանին:

Լըրոմն այսպէս արա լուանին,
Կալ քառասուն հինգ ընդ նըմին,
Ջվերադիրն երթ ընդ կիսակին,
Մընայ ամսոյն լըրոմն քանին:

Առաջաւոր այսպէս զուգի,
Բարեկենդան սուրբ Սարգսի,
Կալցես հինգ թիւ ընդ երեսնի,
Ի նահանջին մէկ աւելի:

Ջնոր վերադիրն գընա աստի,
Եւ որ մնայ՝ կալ ի հաշիւ,
Թէ քան զտասն է աւելի,
Յունըվար ամսոյն տուր ի կարգի,

Պակասն ի փետրըվար անցնի,
Օրագիրտով առ կիրակի,
Թէ հանդիպի ի կիրակի,
Ի միւսն անցո անդառնալի:

Պատկեր աւուրն ինչ որ լինի,
Այն է պատկեր լըման զատկի,
Տաս ի վերայ ած աւելի,
Յայնքան ամսոյն զատկի լինի:

Բայց յինն եւ տասներորդ ամի,
Երեք անգամ այս պատահի,
Ջի քանիք առաջաւորի,
Թիւ աւելի դայ եւ սխալի:

Վերադիրն քանն եւ ութի,
Քսան եւ եօթնի եւ երեսնի,
Երբ երթաս եռսուն ու հընկի,
Կամ յերեսուն ու վեց թրփի,

Ջմընացեալն տուր փետրըվարի,
Միով պակաս օրագիրտի,
Սոյնպէս արա լըման զատկի,
Թիւ մի պակաս տուր ապրիլի:

Աւագ լըրոմն որ է զատկի,
Այսպէս արա ամէն տարի,
110ա Կալ քառասուն թիւ ընդ վեցի,
Ջվերադիրըն երթ յայնքան թրփի:

Թէ քան զքսան թիւ աւելի,
Մընայ, տացես ամսոյն մարտի,
Եւ թէ պակաս մինչեւ ի մի՝
Յապրիլ ամիսն օրգիրտ լինի:

Ապա յոր օր լըրոմն առնի,
Թվեա եւ տուր ի կիրակի,
Թէ հանդիպի ի կիրակի,
Ի միւս անցո զատկի լինի:

Անիոյն եղանակ(ն)երն այս է,
Օրագիրտով ստոյգ ցուցանէ.
Յունըվարի մէկըն կաղանդ է,
Վեցն յայտնութիւն եւ ջըրօրհնէ:

Փետրըվարի չորեքտասան է,
Տեառընդառաջ տօն կատարէ,
Մարտի քըսանն դարուն է,
Տիւն եւ գիշերն հաւասար է:

Ապրիլի եօթն աւետիք է,
Յոր օր առնէ, է կիրակի,
Ի չորեքտասան անկ աստեղ է,
Ընդ արեւուն շրջապատէ:

Ի քրսանուշորսն մաշիսի,
Անկեալ աստղունքն նոր երեւի,
Ի տասնն եւ ինն յունիսի,
Ամառնամուտ դարձ արեւի:

Զի թէ դատիկն ի մարտ լինի,
Վեց ամ ամսոյն տուր շորորդի,
Եւ թէ յապրիլ մէկ յաւելի,
Նոյնպէս տօն է վարդավառի:

Ի տասնուհինքն Եղստոսի,
Տօն է փոխման Աստուածածնի,
Ի տասն եւ չորս սեպտեմբերի,
Վերացման տօն է սուրբ խաչի:

Ի տասն եւ ութն աշուն մտանի,
Տինն ու դիշերն նոր հաւասարի,
Եւ ի տաս օրն հոկտեմբերի,
Յղութիւն (է) Նդիսաբեթի:

Ի տասն եւ ութն նոյեմբերի,
Բարեկենդան յիսնամբարի,
Եւ ի յինն օրն դեկտեմբերի,
Բարեկենդան սուրբ Յակոբի:

110ր Ի սոյն ամսոյ տասն եւ ութի,
Զմեռամուտ դարձ արեւի,
Զի բարձրանայ ի ձմեռայնի,
Եւ խաւարճի յամարայնի:

Ի քսան եւ յինն յայտնութենի,
Բարեկենդան հայոց ազգի,
Օրագիրտով ուր հանդիպի
է սահմանած անփոխելի:

Զաստուածածնին, ըզսուրբ խաչին,
Զյիսնակմբարին, զսուրբ Յակոբին,
Ի յետ դարձո զշորեքշաբթին,
Զհինգշաբթին տուր ի կիրակին:

Եւ տանուէր այսպէս շինէ,
Թըւէն երկոտասանք ձգէ,
Զցածն ի խոյէն յառաջ բաշխէ,
Ուր դադարէ՝ տարոյն այն է:

Տանուէրաց անուանք այս է,
Կենդանակերպք տարոյն որ է,
Նախ խոյ եւ ցուլ, եկաւոր է,
Եւ խեցդետինքն նահանջ է:

Առիւծ, եւ կոյս եւ կըշիւ է,
Կարիճ կրկին նահանջ բերէ,
Աղեղնաւոր այծեղջիւր է,
Զրհուս եւ ձուկըն նահանջ է:

Ի քսան երկու մարտի ամսոյն,
Արեգակն մըտնու ի խոյն,
Պատէ զմի մի յօրս երեսուն,
Յամէն՝ երեքհարիւր վաթսուն:

Իսկ հինգ արարչութեանն աւար,
Արեգակնքն զաստեղքս տուր,
Լուծ, եղջերու եւ ծրկաւոր,
Փառանձոտի եւ արտախոյր:

Գիր բանալեաց այսպէս արա,
Յառաջաւորքն թէ յունար դաշ,
Տասն դընա փետրոյարայ,
Քսան ու մէկ բեր ի վերայ:

Դարձեալ զգատիկի թիւն բռնեա,
Քսաներկուէն մարտի թրեա,
Յայրէն յառաջ դու բաժանեա,
111ա Գիր է տարոյն, որ կայանայ:

Կալ զգատիկին մինչեւ ուր ես,
Ութ ութ կամ քառասուն ձրգես,
Սկիզբն յառաջի ձայնէն դընես,
Ուր դադարէ՝ ստոյգ զրտանես:

Հազար ու վեց թվականի,
Սակաւ տումարս ի յոտք հանի,
Ես որ յիշման չեմ արժանի,
Անուամբ միայն վարդապետի:

Իսկ տէր Դաւիթն Զեթունցի,
Յինէն խնդրեաց եւ ես զրեցի,
Ի խրախութիւն մանկադունի,
Այլ յիմաստնոց պարսաւելի:

Եւ Բուն տումարն Հայոց ազգի,
Որ սրխալեցաւ ի յայսմ ամի,
Զի քանիք առաջաւորի,
Քան զյայտնութիւնն եկն յաւելի:

Պարտ էր պակաս գալ ի կարգի,
Որ յառաջի ամիսն անցնի,
Այլ սա մընայ անխախտելի,
Մինչ ի գալուստն Բրիտանոսի:

